ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «05» 11 2018թ N 1000-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 398-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 398-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 18-րդ կետում «նախագահին» բառը փոխարինել «նախագահը» բառով,

2) 19-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ և 12-րդ ենթակետերով.

«11) իր լիազորությունների սահմանում կատարում է պաշտոնի նշանակում և ազատում, ինչպես նաև կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ,

12) սույն կանոնադրությամբ նախատեսված, իր լիազորությունների սահմանում, ընդունում է անհատական և ներքին իրավական ակտեր:»,

3) 23-րդ կետի 6-րդ ենթակետից հետո «3), 4), 5), 6), 7), 8), 9)» թվերը փոխարինել «7), 8), 9), 10), 11), 12), 13)» թվերով,

4) 26-րդ կետից հետո «25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ և 33-րդ» բառերը փոխարինել «27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ» բառերով:

2. Պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժինը միացնել իրավաբանական վարչությանը:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 398-L հրամանի հավելվածում՝

1) 25-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ ենթակետով՝

«5) իրավաբանական վարչությունը:».

2) 26-րդ կետից հանել 1-ին և 6-րդ ենթակետերը:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ